ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱԴԵՂԻՆԻԱ ՀԱՄԴՈՒԼԼԱՀ ՆԵՄԱԹՈՒԼԼԱՀԻ

ՊԱՆԻՐԱՆԻԶՄԸ 19-20րդ. ԴԱՐԵՐԻ ԻՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2007

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ստամբոլցյան Ա.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բայբուրդյան Վ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու Իսկանդարյան Գ.Մ

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. Մարտի 15-ին ժամը 14:00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-Ի 006 մասնագիտական խորհրդում /հասցեն՝ 375019, Երևան, մարշալ Բաղրամյան պող., 24գ/:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ. փետրվարի 13-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար Շաքարյան Ա. Կ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

19-20-րդ դդ. Իրանի հասարակական-քաղաքական զարգացումների և նրանց համատեքստում պանիրանիզմի (համաիրանականություն) ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական կարևորություն, այնպես էլ քաղաքական արդիականություն:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Իրանի հասարակական-քաղաքական գործընթացների և այն պայմանավորող հանգամանքների լուսաբանումը անմիջապես պայմանավորված է Իրանում ազգային պայքարի ուղղվածության, նրա նպատակների վերլուծության և նրա հետագա զարգացումն ապահովող գործոնների ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Այս ժամանակահատվածում երկրում ստեղծված որոշակի իրադրության պայմաններում իրանական ազգային, հասարակական մտքի ձևավորումը կարևոր նշանակություն ունեցավ երկրի ինքնուրույն զարգացմանը միտված հետագա շարժումների, այդ ուղղությամբ պայքարի շարունակման տեսակետից:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում իրանական ազգայնականության էվոլյուցիայի որոշակի փուլում ձևավորվեց պանիրանիզմը, որի հիմքում դրված էր Իրանի ազգային-քաղաքական միավորման անհրաժեշտության գաղափարը՝ երկրի վաղեմի հզորությունը վերականգնելու ու պահպանելու նպատակով: Այս շրջանում հստակեցվեցին նաև պանիրանիզմի գաղափարախոսության հիմնական սկզբունքները, նպատակները և առանձնահատկությունները:

Թեմայի մանրակրկիտ ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համապարփակ և խորությամբ ընկալել ուսումնասիրվող ժամանակաշրջանում Իրանի հասարակական-քաղաքական զարգացումները և նրանց հիմնական ասպեկտները, օտար տերությունների գաղութարարական քաղաքականության հետևանքով, ինչպես նաև հատկապես 19-րդ դարի վերջից Իրան ներթափանցած Արևմտյան լուսավորական գաղափարների ազդեցությամբ Իրանում ազգայնական տենդենցների սաստկացումն ու ազգայնական տարբեր գաղափարախոսությունների, մասնավորաբար, պանիրանիզմի ձևավորումը:

Պանիրանիզմի ձևավորման ու զարգացման պատմության, նրա գաղափարական և քաղաքական ուղղվածության հետ կապված հարցերի համակողմանի ուսումնասիրությունը, ինչպես նաև Իրանի ազգային անվտանգության ու պետականության ամրապնդման գործում նրա ունեցած դերի ու նշանակության վերհանումն ու ճշգրտումը հնարավորություն կտա ոչ միայն առավել ընկալելի դարձնել Իրանում ազգայնական գաղափարախոսությունների և, հատկապես, պանիրանիզմի ձևավորման անխուսափելիությունը, այլև Իրանի պատմական զարգացման հետագա ողջ ընթացքը և այն պայմանավորող գործոնները:

Իրանում և արտերկրում պանիրանիստական կուսակցությունների,

կազմակերպությունների ու առանձին գործիչների ձեռք բերած հարուստ փորձը հետագայում կարևոր նշանակություն ունեցավ ազգայնական ուժերի համախմբման, Իրանի ինքնության պահպանման ու անկախության ապահովման նպատակի համար ծավալված պայքարում հաջողության հասնելու գործում:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.

Ատենախոսության թեման ընտրվել է պանիրանիզմի գաղափարախոսության ձևավորման հանգամանքների, նրա էության և հետպնդած նպատակների ամբողջական և համալիր լուսաբանության անհրաժեշտությունից ելնելով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Լուսաբանել Իրանական ազգայնականության ծագման և ձևավորման գործընթացը, նրա հիմնական ասպեկտներն ու դրանք պայմանավորող հանգամանքները, ինչպես նաև նրա զարգացման էվոլյուցիան:
- Վերլուծել 19-20-րդ դդ. Իրանի հասարակական-քաղաքական զարգացումները և ներքին ու արտաքին տարբեր գործոնների ազդեցությամբ Իրանում տիրող որոշակի իրադրությունը:
- Ներկայացնել 19-րդ դ. վերջից արևմտյան լուսավորական գաղափարախոսության ներթափանցումն Իրան և նրա ազդեցությամբ երկրում լուսավորական շարժման ծավալումը: Հաստատել այդ շարժման կարևոր նշանակությունը պանիրանիզմի ձևավորման գործում:
- Իրանի հասարակական-քաղաքական որոշակի գործընթացների համատեքստում լուսաբանել պանիրանիզմի ծագման անխուսափելիությունը, Իրանում օտար տերությունների ազդեցությունից ձերբազատվելու և Իրանի ինքնուրույն զարգացման և առաջադիմության համար պայմաններ ապահովելու նրա հիմնական նպատակը:
- Քննարկել պանիրանիզմի հիմնական սկզբունքները, առանձնահատկությունները, պանիրանիստական կուսակցությունների, կազմակերպությունների և առավել հեղինակավոր գաղափարախոսների գործունեության հիմնական ուղղությունները, հիմնավորել նրանց կարևոր դերը իրանական ազգայնական ուժերի համախմբման և նրանց գործունեության ուղղորդման գործում:
- Ճշգրտել պանիրանիզմի դերը Իրանի պատմական զարգացման որոշակի շրջանում և հետագա հասարակական-քաղաքական գործընթացներում ընդհանրապես:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.

Թեև 19-20-րդ դդ. Իրանի հասարակական-քաղաքական զարգացումներին և այդ համատեքստում պանիրանիզմի գաղափարախոսության ձևավորմանը, նրա էությանը, բնորոշ գծերին և հետապնդած նպատակներին առնչվող առանձին խնդիրներ քննարկվել են իրանցի և օտար պատմաբանների աշխատություններում ու գիտական հոդվածներում, սակայն Իրանի պատմության այդ շատ կարևոր շրջանը, առավել ևս պանիրանիզմի գաղափարախոսությունը առ այսօր չեն դարձել ամբողջական և համալիր գիտական ուսումնասիրության առարկա:

Սույն աշխատանքն իր բովանդակությամբ ու հարցադրումներով առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում ընդարձակ փաստագրական նյութի, ինչպես նաև տարալեզու սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների լայն օգտագործմամբ համակողմանիորեն լուսաբանել արծարծվող խնդիրների ամենատարբեր առանձնահատկություններն ու դրանց դրսևորումները:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ.

Ատենախոսության ժամանակագրությունն ընդգրկում է 19-րդ և 20-րդ դարերը: Պատմական զարգացման նոր շրջանի սկիզբը միանգամայն նոր որակ հաղորդեց Մերձավոր և Միջին Արևելքի և, մասնավորապես, Իրանի պատմության հետագա ընթացքին: Արևմտյան տերությունների գաղութարարական քաղաքականությանը դիմակայելու անհրաժեշտությունը խթանեց երկրի ազգային ուժերի պայքարը Իրանի անկախության և առաջադիմության համար: Իրանական ժողովրդին միավորող գործոն հանդիսացավ իրանական ազգայնականության նոր վերելքը, որի դրսևորումներից էր նաև պանիրանիստական գաղափարախոսությունը: Ուսումնասիրվող շրջանի ընտրությունը պայմանավորված է իրանական ժողովրդի ազգային շարժման այս փուլի առանձնակի նշանակությամբ: Վերոհիշյալ շրջանում ձևավորվեցին ազգայնական գաղափարախոսությունների հիմնական սկզբունքներն ու նպատակները, ազգայնական շարժման մասնակից հիմնական ուժերի, այդ թվում և պանիրանիստների ձեռք բերած հարուստ փորձը շատ դեպքերում որոշեցին և ուղղորդեցին իրանցիների ազգային շարժման հետագա ընթացքը և կարևոր դեր խաղացին հետագայում նոր գաղափարախոսությունների և պայքարի նոր մեթոդների ձևավորման գործում:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ.

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը 19-20-րդ դարերում Իրանի հասարակական-քաղաքական գործընթացների, ինչպես նաև իրանական ազգայնականության և հատկապես պանիրանիզմի գաղափարախոսության, նրա ձևավորման նախադրյալների, այն պայմանավորող հիմնական հանգամանքների և հետապնդած նպատակների հետ կապված տեսակետերի և հարցադրումների քննարկման մեկնությունն է և առկա տվյալների, տեղեկությունների ու փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

19-20-րդ դդ. Իրանի հասարակական-քաղաքական գործընթացների համակողմանի ուսումնասիրությունը, ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթներն ու եզրահանգումները կարող են նպաստել Իրանի նոր և նորագույն պատմության հիմնախնդիրների, անկախության և առաջադիմության համար Իրանի ժողովրդի պայքարի ամբողջական ընկալմանը: Այն նաև թույլ կտա ավելի ճիշտ ըմբռնել այդ նպատակին հասնելու՝ Իրանի հասարակության տարբեր խավերի և շերտերի որոնումները, Իրանում տարբեր գաղափարախոսությունների, մասնավորաբար, պանիրանիզմի ձևավորման հանգամանքները և հնարավորություն կտա ճշգրտել ու գնահատել նրա էությունն ու հետապնդած նպատակները:

Աշխատության եզրահանգումները կարող են օգտագործվել նաև Իրանի նոր և նորագույն պատմության, իրանական ժողովրդի ազգային շարժման, ինչպես նաև Իրանում հասարակական-քաղաքական մտքի և գաղափարական տարբեր ուղղությունների ձևավորման պատմությանը նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսությունը քննարկվել և նախնական հավանության է արժանացել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի իրանագիտության բաժնում: Նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում և գիտաժողովներում ընթերցած զեկուցումներում: Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած հոդվածների ցանկը ներկայացվում է սեղմագրի վերջում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Աշխատանքում արծրածվող հիմնախնդիրներին առնչվող հարցերի լուսաբանմանը և, մասնավորաբար, պանիրանիզմի գաղափարախոսության ընկալմանն ու գնահատմանը մեծապես նպաստել են պանիրանիստական կազմակերպությունների՝ մեր տրամադրության տակ եղած ծրագրային փաստաթղթերը, որոնք ամբողջական և ճշգրիտ պատկերացում են տալիս այդ գաղափարախոսության էության, հետապնդած նպատակների և քարոզչության տարբեր ձևերի մասին[1]: Այս տեսակետից հատկապես կարևոր

---

[1] حزب پان ایرانیست، مبانی پان ایرانیسم، انتشارات کانون آرمان شناسی حزب پان ایرانیست، تهران، 1346.

حزب پان ایرانیست، نظرات انتقادی و تکمیلی حزب پان ایرانیست درباره لوایح تهران ، 1341. ششگانه، انتشارات حزب پان ایرانیست،

حزب پان ایرانیست، سخنی کوتاه پیرامون پان ایرانیسم و حزب پان ایرانیسم، تهران، 1346.

حزب پان ایرانیست، چچنستان و مرزهای ژنوپلتیک، انتشارات حزب پان ایرانیست، 1374.

են եղել Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո «Իսլամական հեղափոխության փաստաթղթերի կենտրոնի հրատարակությունների» կազմակերպության կողմից առանձին գրքույկով լույս ընծայված պանիրանիստական կուսակցություններին վերաբերող արժեքավոր փաստաթղթերը: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև պանիրանիզմի գաղափարախոսների ուսումնասիրություններն ու հրապարակումները, որոնցում առկա են պանիրանիզմին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ նրանց տեսակետերն ու մոտեցումները[2], որոնք չափազանց կարևոր են այդ հարցերի լուսաբանման և ճշգրտման համար: Նույնքան ուշագրավ են նաև պանիրանիզմի գաղափարախոսների հայացքներին և նրանց գործունեությանը նվիրված տարբեր հեղինակների ուսումնասիրությունները[3]:

عزیزی، غلامرضا، حزب سوسیالیست ملی کارگران ایران (سومکا)، انتشارات مرکز اسناد انقلاب اسلامی، چاپ اول، تهران ، 1383.

رزمجو، علی اکبر، حزب پان ایرانیست نوشته، از انتشارات مرکز اسناد انقلاب اسلامی، چاپ اول، تهران، 1378.

پزشکپور، محسن، ما چه می خواهیم، انتشارات کانون آرمان شناسی مکتب پان ایرانیسم ، چاپ دوم، تهران، 1330.

دانشجویان مسلمان پیرو خط امام، احزاب سیاسی درایران (بخش 2) ، مرکز نشر اسناد لانه جاسوسی، تهران، 1367.

روابط عمومی وزارت اطلاعات، فرازهایی از تاریخ انقلاب به روایت اسناد ساواک و آمریکا، تهران، 1368.

معاونت خدمات مدیریت و اطلاع رسانی دفتر رئیس جمهور، اسنادی از جنبش دانشجویی در ایران (1329 – 1357)

[2] آخوندزاده، میرزا فتحعلی، الفبای جدید و مکتوبات، به کوشش حمید محمد زاده، نشراحیاء، تبریز1357.

کرماني، ناظم الاسلام، تاریخ بیداري ایرانیان، به کوشش علي اکبر سعیدي سیرجاني، انتشارات آگاه – نوین، تهران1363.

کاتوزیان، محمدعلی (همایون)، اقتصاد سیاسی ایران (از مشروطیت تا پایان سلسله پهلوی) ، نشر مرکز ، چاپ چهارم، تهران ، 1373.

خاطرات زندنیا، هر سه مجموعه، سه نسخه یاد شده عبارتند از: مجموعه های ضبط شده خاطرات امیرشاپور زندنیا در

تقي زاده، سید حسن، زندگاني طوفاني، به کوشش ایرج افشار، انتشارات علمی، تهران 1372.

مکتب پان ایرانیسم، بنیاد مکتب پان ایرانیسم.

منشی زاده ، داوود، « قناری ها فرار کرده اند»، در به در در پی بهشت.

منشی زاده، داوود، پیکار با اهرمن، انتشارات فرهنگ سومکا، چاپ دوم، تهران ، 1332.

کاتوزیان، محمدعلی (همایون)، مصدق و مبارزه قدرت در ایران، نشر مرکز، چاپ دوم، تهران1378.

کاتوزیان محمد علی همایون، تضاد دولت و ملت، چاپ دوم، نشر نی، تهران، 1381

کرماني، ناظم الاسلام، تاریخ بیداري ایرانیان، به کوشش علي اکبر سعیدي سیرجاني، انتشارات آگاه – نوین، تهران1363.

کاتوزیان محمد علی همایون، تضاد دولت و ملت، چاپ دوم، نشر نی، تهران، 1381

նաև քաղաքական, հասարակական, ազգային ու ավանդական-մշակութային այն առանձնահատկությունների ոչ ճիշտ ընկալմամբ, որոնց առկայության պայմաններում սկզբնավորվել և զարգացել է պանիրանիզմի գաղափարախոսությունը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ռ. Քաթեմի աշխատությունը: Լինելով Իրանում ազգայնական գաղափարների տեսաբաններից մեկը՝ նա ուսումնասիրության առարկա է դարձրել ազգայնականության տարբեր դրսևորումները ժամանակակից Իրանում, տվել նրանց ճշգրիտ բնորոշումն ու գնահատականը[7]:

Ատենախոսությունը շարադրելիս լայնորեն օգտագործել ենք նաև հայ գիտնականներ Վ. Բայբուրդյանի, Հ. Եգանյանի, Բ. Բալայանի, Ա. Ստամբոլցյանի՝ մեզ հետաքրքրող խնդիրներին վերաբերող աշխատությունները[8], որնցում առկա է հարուստ փաստագրական նյութ, առանձին հարցերի հանգամանալի վերլուծություն և արժեքավոր եզրահանգումներ:

Մեզ հետաքրքրող խնդիրների լուսաբանման համար հարուստ նյութեր է տրամադրում այդ շրջանի իրանական մամուլը[9] և, մասնավորաբար, պանիրանիստական «Քավե», «Իրանշահր», «Ֆարհանգեսթան», «Այանդե» ամսագրերը, «Խաք օ խուն», «Սումքա», «Արման-ե մելլաթ» և այլ լրագրերը[10], որոնցում ներկայացված տվյալները, տեղեկություններն ու արտահայտված տեսակետերը մեր կողմից լայնորեն օգտագործվել են:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից), եզրափակումից, օգտագործած աղբյուրների և գրականության ցանկից:

ԱՌԱՋԱԲԱՆԻ մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակներն ու դրույթները, գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

---

[7] R.W. Cottam, Nationalism in Iran. Pittsburgh, 1964.

[8] Վ. Բայբուրդյան, Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., 2005., Հ. Եգանյան, Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում, Եր., 1966., Б. Балаян, Международные отношения Ирана в 1813-1828 гг. Ер. 1967., А. Стамболцян, Внутренняя политика провительства национальной буржуазии Ирана (1951-1953 гг.), Ер., 1984., Ա. Ստամբոլցյան, Ազգային ճակատի մասնակցությունը 1978-1979 թթ. իրանական հեղափոխությանը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h XV, Եր., 1989.

[9] اطلاعات، ایران، میهن، دنیا، دنیا، اطلاعات ماهانه، یادگا، یغما، تهران مصور،

[10] سومکا، آرمان ملت، آینده، ایرانشهر، فرنگستان، خاک و خون، کاوه

Առաջին գլուխը «ԻՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ՊԱՆԻՐԱՆԻԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՐՆԵՐԸ» ներկայացնում է պանիրանիզմի առաջացմանն ու տարածմանը նպաստող պատճառներն ու նախադրյալները:

19-րդ դ. սկզբից սկսած Եվրոպական տերությունների, հատկապես Անգլիայի և Ռուսաստանի քաղաքականության աննախադեպ ակտիվությունն Իրանում և Իրանի վերածումը կիսագաղութի առիթ տվեց ազգայնական տրամադրությունների սաստկացման և նրանց ամենատարբեր դրսևորումների:

Միաժամանակ եվրոպական երկրների հետ շփումների ընդլայնումը իրանցի մտավորականներին և առաջադեմ գործիչներին հնարավորություն տվեց մոտիկից ծանոթանալ Արևմտյան մշակույթին և քաղաքակրթությանը, ինչն ավելի ակնբախ դարձրեց Իրանի ծայրահեղ հետամնացությունը և խթան հանդիսացավ Իրանի ազգայնականների համար՝ փորձելու գտնել երկրի հետամնացության պատճառները, ուղիներ որոնել դրանք վերացնելու և երկիրն ստեղծված վիճակից դուրս բերելու:

Չնայած մոտեցումներում առկա տարբերություններին՝ իրանցի ազգայնականները միասնական էին այն հարցում, որ իրենց հայրենիքը հետամնացությունից ու խավարամտությունից ձերբազատելու համար անհրաժեշտ է օգտագործել Եվրոպայի փորձը՝ նրա առաջադիմության ու զարգացման գործում որոշիչ համարելով և առաջնահերթությունը տալով հասարակական շարժումներին ու կառավարման ձևին և դրանցով պայմանավորելով այդ երկրների գիտության, կրթության ու տնտեսության զարգացման բարձր մակարդակը:

Երկրում իրական բարեփոխումների անհրաժեշտությունը գիտակցում էին ոչ միայն առաջադիմական շրջանները, այլև տիրող վերնախավը: Արդեն 19-րդ դ. երկրորդ կեսին՝ Նասրեդդին շահի օրոք, մեծ վեզիր Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրի անմիջական նախաձեռնությամբ իրականացվեց բարեփոխումների ընդարձակ ծրագիր, որն ընդգրկում էր երկրի ներքի կյանքի ամենատարբեր բնագավառները: Զգալի փոփոխություններ կատարվեցին հատկապես կրթության համակարգում. 19-րդ դարի առաջին կեսը նշանավորվեց նաև 1851 թ. Իրանում առաջին տպարանի և պաշտոնական մամուլի հիմնադրմամբ: Բարեփոխումների այս գործընթացը հետագայում ունեցավ իր շարունակությունը և ավելի ընդարձակվեց ու խորացվեց:

Իրանում ազգայնականության վերելքի այս փուլի ձևավորման համար անժխտելիորեն կարևոր նշանակություն ունեցավ 19-րդ դ. վերջերին արևմտյան լուսավորական գաղափարների ներթափանցումը Իրան և նրա ազդեցությամբ Իրանում նոր ազգայնականության ձևավորումը:

Գլխում հստակորեն սահմանազատվում է իրանցիների ավանդական-ազգային գաղափարախոսությունն ու դեռևս Ղաջարների տիրապետության շրջանից Իրանի մշակութային-քաղաքական կյանքում ի հայտ եկած «պարսկական ազգայնականությունը», «վերադարձը դեպի

արմատներ» (պրսկ. «բազգաշբ»), «հնամետությունը» (պրսկ. «բասքանգարայի»), որոնք հետագայում վերածեցին պարսկական գաղափարախոսության և որի շուրջ մի քանի տասնամյակների ընթացքում համախմբվեց Իրանի ողջ հասարակական-քաղաքական ներուժը:

Գլխի առանձին բաժիններում ներկայացվում են իրանական լուսավորիչների հիմնական նպատակները և այդ նպատակների իրականացմանն ուղղված նրանց գործունեությունը: Հանգամանորեն քննարկվում է հատկապես Իրանի քաղաքական մտքի պատմության ամենակարկառուն դեմքերից մեկի՝ Միրզա Մալքոմ խանի (Հովսեփ Մելքումյան) գործունեության ընդարձակ ոլորտը, նրա չափազանց մեծ դերը եվրոպական առաջադեմ գաղափարներն Իրանում տարածելու և Իրանը օրինադավան երկիր դարձնելու, եվրոպական քաղաքակրթության լավագույն կողմերն Իրանում արմատավորելու գործում: Անդրադարձ է կատարվում նաև արտերկրում իրանցի մտավորականների և լուսավորիչների գործունեության հիմնական ուղղություններին, նրանց հետապնդած նպատակներին և դրանց իրականացման միջոցներին:

Լուսավորիչների քարոզչությունը հիմնականում միտված էր ժողովրդական զանգվածների մեջ «հայրենիքի» և «հայրենասիրության» գաղափարների տարածմանը: Իրանի ինքնուրույն զարգացումն ապահովելու նպատակով նրանք երբեմն, ինչպես և իրանական ազգայնականության ավելի վաղ փուլերում, շահարկում էին Իրանի պատմական անցյալն ու պետական ավանդույթները, ուռճացնում ազգային առանձնահատկությունները: Փաստորեն հայրենասիրության գաղափարախոսությունը օգտագործելով որպես ազգը կազմող բոլոր հասարակական շերտերի շահերն արտահայտող և նրանց համախմբումն ապահովող հիմնական միջոց՝ 19-րդ դ. իրանական լուսավորիչներն ստեղծեցին իրանական նոր ազգայնականություն, որը ձևավորվել էր արևմտյան գաղափարների հենքի վրա և էապես տարբերվում էր մինչ այդ Իրանում տարածված ազգայնականությունից:

Առանձին ենթաբաժնում քննարկվում է նաև պանիրանիզմի առաջին գաղափարակիրների գործունեությունը, որոնք, յուրացնելով ժամանակի եվրոպական հասարակական-մտավորական շրջանակների փորձն ու գաղափարները, Իրանի հետամնացության պատճառ էին համարում արաբների առաջխաղացումն ու իսլամի գերակայությունը, ինչի հետևանքով խաթարվեցին իրանցիների բնավորության ավանդական գծերն ու հոգեկան կերտվածքը: Սասանյան Իրանի օրինակով «Մեծ Իրանի» ստեղծումը դարձել էր նրանց գաղափարական գործունեության հիմնական նպատակը:

Հատկանշանական է, որ տարված եվրոպական քաղաքակրթությամբ ու մշակույթով, ունենալով եվրոպական կողմնորոշում և իրենց վրա կրելով եվրոպական հասարակական-քաղաքական, գաղափարախոսական մտքի ազդեցությունը, պանիրանիստների զգալի մասը իրանական արժեքները գնահատում էր եվրոպական չափանիշներով:

Գլխում հանգամանորեն ներկայացվում է պանիրանիզմի

հիմնադիրներ Միրզա Ֆաթհալի Ախունդզադեյի (Ախունդով), Ջալալեդդին Միրզա Ղաջարի, Միրզա Աղա-խան Քերմանիի, Աբդոլռահիմ Թալիբովի և մյուսների քաղաքական հայացքները, գաղափարական առանձնահատկությունները և Իրան քաղաքական, մշակութային նոր գաղափարներ Իրան ներմուծելու, իրանական հասարակության մեջ դրանք քարոզելու և տարածելու, ինչպես նաև սահմանադրական կարգի հաստատման համար նրանց պայքարի հանելու նպատակով ծավալած գործունեությունը:

Երկրորդ գլուխում «ԻՐԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ (1896-1941թթ.): ՆՈՐ ՊԱՆԻՐԱՆԻԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ» համակողմանի վերլուծության է ենթարկվում Իրանի հասարակական-քաղաքական կյանքի՝ իրադարձություններով լի այդ կարևոր շրջանի էվոլյուցիան, սահմանազատվում և բնորոշվում են իրենց բնույթով միմյանցից տարբերվող նրա երեք փուլերը (1896-1906), (1906-1921), (1921-1941թ.թ.), և դրանք պայմանավորող ներքին և արտաքին հանգամանքները:

Գլխի ենթաբաժիններում քննարկվում են այս շրջանում Իրանի հասարակական զարգացումների մեջ կատարված փոփոխություններն ու տեղաշարժերը, որոնք ոչ միայն նպաստեցին, այլև անհրաժեշտ դարձրին ազգայնական գաղափարների, մասնավորաբար, պանիրանիզմի գաղափարախոսության հետագա զարգացումն ու տարածումը: Այս տեսակետից կարևորվում են հատկապես Առաջին համաշխարհային պատերազմից հետո Իրանում ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմանները, միաժամանակ միջնադարյան հասարակական կյանքի բռնակալական, գաղափարական և տնտեսական հարաբերությունների պահպանումը, շահի և տիրող շրջանների ինքնիշխանությունը, ինչպես նաև արտաքին ուժերի կողմից իրականացվող գաղութացման քաղաքականությունը, որոնք ծայրահեղ չափով սրել էին երկրում տիրող իրավիճակը և ստեղծել օրեցօր սաստկացող դժգոհության համընդհանուր մթնոլորտ:

Երկրում տիրող այսպիսի իրադրությունը առավել չափով նպաստեց իրանցիների ազգային զարթոնքին, ապահովեց ազգայնականության նոր վերելքը և սկիզբ դրեց ազգային միասնականության գործընթացին: Ազգայնական գործիչները ձեռնամուխ եղան ամենատարբեր ձևերով հասարակության մեջ հայրենասիրական զգացումների արթնացմանը, որի հիմնական նպատակն էր ազգային շահերի շուրջ համախմբմամբ միասնական ուժերով երկրիրը դուրս բերել ճգնաժամից և իրական պայմաններ ստեղծել նրա ինքնուրույն զարգացման համար:

Սահմանադրական հեղափոխությունը, որը նպատակաուղղված էր երկրում բռնապետական իշխանության տապալմանը և օրինական պետականության հիմնմանը, անհաջողության մատնվեց: Արդեն հեղափոխության տարիներին (1907թ.) Իրանի բաժանումը Ռուսաստանի և Անգլիայի ազդեցության ոլորտների, այնուհետև օտարերկրյա (անգլիական և

ռուսական) ինտերվենցիան Իրան և ներքին հետադիմության հետ համատեղ ուժերով հեղափոխության ճնշումը, ինչպես նաև կարճ ժամանակ անց՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, ռուսական, անգլիական, օսմանյան և գերմանական զինված ուժերի գործողությունները հանգեցրին երկրի կենտրոնական իշխանության ծայրահեղ թուլացման: Հետպատերազմյան տարիներին հատկապես անգլո-խորհրդային մցակցությունը էլ ավելի սրեց երկրի պետականության փլուզման գործընթացը, ինչը առիթ տվեց երկրում ազգայնական տրամադրությունների սաստկացման:

Այս շրջանում իրանական ազգայնականների գործունեության կարևոր բնագավառներից մեկը դարձավ պարսկերեն լեզվի մաքրումը օտարաբանություններից («լեզվական պուրիզմ»), մասնավորաբար, արաբերենից, ինչն ուղեկցվում էր իրանական հասարակության մեջ բոլոր միջոցներով արաբների հանդեպ թշնամանքի ներշնչմանը և միանգամայն համահունչ էր իրանական ազգայնականների կողմնորոշումներին ու հետապնդած նպատակներին: Այս գործընթացում, սակայն, առկա էին խիստ ծայրահեղ մոտեցումներ, համաձայն որոնց՝ պարսկերեն լեզվում արաբերեն բառերի գոյությունն արդեն իսկ ներկայացվում էր որպես իրանցիների ազգային արժանապատվության համար ստորացուցիչ հանգամանք, որոնց անհապաղ օտարումը մայրենի լեզվից դիտվում էր որպես ազգային ինքնագիտակցության ու անկախության հիմքերի ամրապնդման անհրաժեշտ գործոն:

Գլխում հանգամանորեն քննարկվում են նաև այդ շրջանում Իրանում տարբեր ուղղությունների քաղաքական կուսակցությունների ձևավորման գործընթացը և հասարակական-քաղաքական զարգացումների համատեքստում իրանական հասարակության մեջ հնամետության և պարսկական ազգայնականության նոր, իր նախադեպը չունեցող դրսևորումները: Այս տեսակետից հատկանշական է «Իրանի դեմոկրատական կուսակցության» գործունեությունը, որը հիմնական կենտրոնն էր պարսկական բազմաթիվ չափավոր և ծայրահեղ ազգայնականների ձևավորման, որոնք կարևոր դեր խաղացին ժամանակի քաղաքական և հասարակական կյանքում և մեծապես ազդեցին ներքաղաքական հետագա զարգացումների վրա:

Իրանում ազգայնական տրամադրությունների առավել սաստկացմանը նպաստեց հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուսական, անգլիական և օսմանյան զինված ուժերի մուտքը Իրան և այնտեղ նրանց ակտիվ գործունեությունը, ինչպես նաև Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո խորհրդային ուժերի կողմից երկրի հյուսիսային շրջաններում անջատողական շարժումներ հրահրելու, և, միաժամանակ, երկրի հարավում անգլիացիների՝ իրենց գերակայության հաստատմանն ուղղված գործողությունները:

Տերությունների որոշակի քաղաքականության հետևանքով Իրանի ողջ տարածքում ստեղծված անապահովության ու անհուսության ընդհանուր

մթնոլորտը և երկրի ինքնուրույնության կորստի իրական վտանգը Իրանի մտավորականության և քաղաքական գործիչների մի մասին հակեց ծայրահեղ ազգայնական գաղափարների: Այսպիսով, իրանական ազգայնականությունը ծայրահեղ պարսկական ազգայնականության հետ միասին Առաջին աշխարհամարտի տարիներին սկսեց ակտիվորեն իր շուրջը համախմբել Իրանի ճակատագրով և նրա ապագայով մտահոգված ուժերին:

Պատերազմի սկզբնական շրջանում Գերմանիայի կայծակնային հաղթանակները ոգևորեցին այն առաջադեմ իրանցիներին, ովքեր գերմանացիներին համարում էին իրենց ցեղակիցներ: Հենց արիականության նկատմամբ այս վառ արտահայտված մոլուցքը դարձավ իրանական ռոմանտիկ ազգայնականության և պանիրանիզմի վերելքի հիմնական խթան: Պանիրանիստները երկրի փրկության միակ ուղին տեսնում էին կենտրոնացված հզոր իշխանության ստեղծման և նրա գլուխ կանգնած հայրենասեր ազգայնական առաջնորդի կերպարում: Այդ էր պատճառը, որ իրանական ծայրահեղ ազգայնականությունը Առաջին համաշխարհային պատերազմից հետո ավելի լայն տարածում գտավ: Ընդհատակից դուրս գալով՝ այն աստիճանաբար վերածվեց լեգալ շարժման՝ հասարակության մեջ հաստատվելով որպես արժեքավոր գաղափար: Ախունդզադեի, Միրզա Աղա-խան Քերմանիի և նրանց համախոհների ու հետևորդների գաղափարները, որոնք ընկալելի չէին հասարակության լայն շրջանների համար, Առաջին աշխարհամարտից հետո դարձան քաղաքական ակտիվիստների և մտավորականության մեծամասնության գաղափարախոսություն, որով տոգորված էր նաև իրանական մշակույթը: Այս տեսակետից հատկապես կարևոր դեր են խաղացել արտերկրում հրատարակվող «Քավե», «Իրանշահր», «Ֆարհանգեսթան» ամսագրերը, որոնցում քարոզվում և հիմնավորվում էր կենտրոնացված և հզոր իշխանության հաստատման անհրաժեշտությունը:

Կենտրոնացված ուժեղ պետության ստեղծման գաղափարը, հիմնված ազգային ինքնագիտակցության և իրանական ազգայնականության վրա, իր արտացոլումը գտավ իրանցի ազգայնականների գործունեության մեջ: Գովերգելով Իրանի փառավոր անցյալը, Աքեմենյանների ու Սասանյանների հզորությունը, ռազմական և մշակութային ձեռքբերումները՝ նրանք նպաստեցին հասարակության տարբեր շերտերի մեջ ազգայնական ոգու և պատասխանատվության զգացումի ձևավորմանը, ինչն արտահայտվեց ազգայնականության և, հատկապես, պանիրանիզմի նոր դրսևորումներով:

Դրա հետևանքը եղավ 1925 թ. Իրանում Փեհլևիների դինաստիայի հաստատումը, ինչը, փաստորեն, կենտրոնացված պետականության, հզոր կենտրոնական իշխանության և ուժեղ միապետի իդեալի իրականացումն էր:

Գլխում հանգամանալի քննարկման են ենթարկվում Փեհլևիների դինաստիայի հիմնադիր Ռեզա շահի տիրապետության շրջանը, նրա կողմից իրականացվող ներքին և արտաքին քաղաքականության բնույթը, մասնավորաբար, նրա՝ ծայրահեղ ազգայնականության՝ «պանֆարսիզմի»

գաղափարական և գործնական ուղղվածությունն ու հետապնդած նպատակները և այս համատեքստում պանիրանիզմի գաղափարախոսության հետագա զարգացումը: Հատկապես ընգծվում է այն հանգամանքը, որ Ռեզա շահի ազգայնականությունը վերածվեց պետության պաշտոնական գաղափարախոսության և մեծապես նպաստեց նրա միապետական իշխանության ամրապնդմանը:

Աշխատանքում միաժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվում Ռեզա շահի քաղաքականության բռնապետական և հակադեմոկրատական իշխանության վերջին շրջանում նաև գերմանամետ ասպեկտներին, որոնք, ի վերջո, հիմնական պատճառներից մեկը դարձան նրա տապալման:

Վերլուծվում և մեկնաբանվում են նաև պանիրանիզմի հիմնադիր Սեյյեդ Հասան Թաղիզադեի, Միրզա Աղա-խան Քերմանիի, Աբդոլռահիմ Թալիբովի և այլ պանիրանիստների հայացքները, կողմնորոշումները, գործունեության հիմնական բնագավառները և նրանց կարևոր դերը իրանկան ազգայնականության հետագա զարգացման գործում:

Երրորդ գլխում «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ 20-րդ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ (1941-1978թթ.): ՊԱՆԻՐԱՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ» ներկայացվում է այս շրջանում Իրանում ծավալված հասարակական-քաղաքական գործընթացների էվոլյուցիան մինչև 1978-1979թթ. Իսլամական հեղափոխությունը, նրա առանձին փուլերը և նրանցից յուրաքանչյուրի բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Գլխում հանգամանորեն քննարկվում է 1941-1943թթ. Իրանում ստեղծված իրադրությունը, Խորհրդային Միության, Անգլիայի, ԱՄՆ-ի հետապնդած նպատակներն ու դրանց իրականացմանն ուղղված վերջիններիս քաղաքականությունը, ինչն էլ ավելի սաստկացրեց երկրում հասարակության տարբեր խավերի դժգոհությունը և առաջ բերեց ազգայնական շարժման նոր վերելք: Երկրում ստեղծված իրադրությունը բարենպաստ եղավ ֆաշիստական Գերմանիայի ակտիվացման, գերմանացիների հետ Իրանի որոշ ուժերի սերտ համագործակցության և վերջիններիս ջանքերով «ազգայնականների» շարժման ձևավորման համար: Նացիստական կուսակցության տեսաբանների գաղափարների ներթափանցումը Իրան պատճառ դարձավ Իրանում պանիրանիզմի և մեծապետական շովինիզմի գաղափարների կաղապարով քաղաքական նոր հոսանքների ձևավորման:

Իրանական ազգայնականության նոր վերելքի համար խթան հանդիսացան նաև հետպատերազմյան տարիներին Իրանի հյուսիսային նահանգներում՝ Ատրպատականում, Գիլանում, Խուզիստանում ծայր առած շարժումները, որոնք, փաստորեն, իրականացվում էին ԽՍՀՄ-ի կողմից որոշակի նպատակներով հրահրվող և խրախուսվող տեղական անջատողական ուժերի կողմից և, իհարկե, Իրանի նորագույն պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկը՝ դր. Մոհամմեդ Մոսադեղի գլխավորած Ազգային ճակատ կազմակերպության ջանքերով 1951 թ. Իրանի

նավթարդյունաբերության ազգայնացման մասին օրենքի ընդունումը և Մոսադեղի կառավարության հաստատումը:

1941-1953թթ. Իրանում ազգայնական զգացումների արթնացումը և քաղաքական գործունեության համար նպաստավոր իրադրությունը հնարավար դարձրին քաղաքական տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների ու խմբավորումների ստեղծումը, որոնց գործունեությունը ուղղված էր արտաքին ուժերին երկրից հեռացնելու և Իրանի տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության վերականգնման նպատակի իրականացմանը:

Այսպիսով, պատմական երկու կարևոր իրադարձությունների՝ 1941 թ. Իրանի տարածք դաշնակից զորքերի մուտքի և Ռեզա շահ Փեհլևիի գահընկեցության, իսկ մյուս կողմից՝ 1953 թ. օգոստոսի 19-ի (մորդադի 28-ի) պետական հեղաշրջման հետևանքով Մոհամմեդ Մոսադեղի գլխավորած ազգային բուրժուազիայի կառավարության տապալման ու Մոհամմեդ Ռեզա շահի բռնակալական վարչակարգի վերահաստատման միջև ընկած ժամանակահատվածում պատեհ պայմաններ էին ստեղծվել քաղաքական ակտիվ գործունեության և մի շարք քաղաքական կուսակցությունների և խմբավորումների հիմնման համար: Այսպիսի իրադրությունը պայմանավորված էր երկրի ներսում քաղաքական խմորումների և նավթարդյունաբերության ազգայնացման գործընթացի հետ կապված ազգայնական զգացումների սաստկացմամբ, ինչն ուղղված էր արտաքին ուժերի ներկայությունից անհապաղ ձերբազատմանն ու երկրի լիակատար քաղաքական ու տնտեսական ինքնիշխանության վերականգնմանը:

Ազգայնական գաղափարները, որ սկիզբ էին առել դեռևս Ղաջարների տիրապետության շրջանում, երկրում ստեղծված որոշակի իրադրության պայմաններում և երկրի քաղաքական զարգացումներին համընթաց աստիճանաբար ավելի էին կոնկրետանում և հստակեցվում՝ կարևոր տեղ գրավելով Իրանի նորագույն պատմության հետագա փուլերում:

Ռեզա շահի դարաշրջանը, համընկնելով Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստական գաղափարների քարոզման և տարածման բարձրակետի հետ, այդ գաղափարներին ծանոթանալու և ընկալելու անհնարաղեպ նպաստավոր պայմաններ ապահովեց իրանական հասարակության մտավորական շրջանակների համար: Այս առումով հատկապես կարևոր դեր խաղացին Գերմանիայում ուսանած իրանցի երիտասարդ մտավորականները, որոնց մի մասը, հարելով գերմանական նացիոնալ-սոցիալիստներին, նույնիսկ ֆաշիստական Գերմանիայի պարտությունից հետո հավատարիմ մնաց այդ գաղափարներին: Այդ ուսանողներից էր Դավուդ Մոնշիզադեն, որը, Իրան վերադառնալով, լուրջ քայլեր ձեռնարկեց ամրապնդելու «Իրանի բանվորական նացիոնալ-սոցիալիստական» կուսակցությունը: Դեռևս քառասունական թվականների սկզբներից Հաբիբուլլահ Նոուբախտիի ղեկավարությամբ Իրանում գործում էր նացիոնալ-սոցիալիստական և խիստ պահպանողական ուղղվածություն ունեցող «Կապույտ կուսակցությունը» («Հեզբ-ե քաբուդ»), որը հայտնի է նաև

«Սելլիյուն» անվանումով: Այն հիմնականում գործում էր ընդհատակում և առավել կազմակերպված բնույթ ստացավ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ Իրան դաշնակիցների մուտքից հետո: Հիշատակության արժանի է նաև նացիոնալ-սոցիալիստական ուղղվածություն ունեցող «Արիա» կուսակցությունը:

Գլխում առավել հանգամանորեն քննարկվում են այս շրջանում ստեղծված ծայրահեղ ազգայնական պանիրանիստական երեք կուսակցությունների՝ «Պանիրանիստական կուսակցության», «Իրանի բանվորական նացիոնալ-սոցալիստական կուսակցություն» և «Իրանի ժողովրդի կուսակցություն», ձևավորման պատմությունը, կառուցվածքը, գործելաոճը, ինչպես նաև երկրում հասարակական զարգացումների համատեքստում նրանց գործունեության մեջ կատարված որոշակի փոփոխությունները և հասարակական-քաղաքական շարժման հետագա փուլերի վրա ունեցած գաղափարական ազդեցությունը: Պակաս կարևոր չէ նաև ժողովրդական շարժումներում, հատկապես նավթարդյունաբերության ազգայնացման և դրան հաջորդող գործընթացներում հիշյալ պանիրանիստական ուժերի դերակատարությունը: Այս կուսակցությունների կողմնորոշումների, նրանց գործունեության սկզբունքների, բնույթի և ուղղվածության միջև առկա էական տարբերությունները հետագայում մեծապես կանխորոշեցին նրանցից յուրաքանչյուրի վերաբերմունքը 1978-1979 թթ. Իսլամական հեղափոխության նկատմամբ:

ԵԶՐԱՓԱԿՍԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, հեղինակը եզրակացնում է.

- 19-րդ դ. Իրանի տիրող շրջանների ինքնիշխանության և արևմտյան տերությունների կողմից իրականացվող գաղութացման քաղաքականության հետևանքով Իրանում ձևավորված որոշակի հասարակակա-քաղաքական իրադրությունը նպաստավոր եղավ եվրոպական լուսավորության, ազգայնական գաղափարախոսությունների ներթափանցման համար: Հայրենասիրություն, տարածքային ամբողջականություն և պետական շահերի պաշտպանություն քարոզող այդ գաղափարները լայն տարածում գտան իրանական հասարակության մեջ և իրենց անժխտելիորեն կարևոր ազդեցությունն ունեցան իրանական ազգայնականության ձևավորման գործում: Այն ընկալվեց և ընդունվեց ազգային-ավանդական և միաժամանակ առաջադիմական շրջանակների կողմից՝ դառնալով վերջիններիս քաղաքական կողմնորոշման ասպեկտներից մեկը: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ իրանական առաջին ազգայնականների շարքերում հանդիպում են և՛ առաջադիմականների, և՛ տարբեր ազգայնամետ, ավանդական, կրոնական, հայրենասիրական խմբավորումներ:

- Ազգային գաղափարախոսության կամ դրա տեղական մոդելի վերաճումը «պարսկական ազգայնականության», որը ձևավորվեց Ֆաթհալի Ախունդզադեի գործունեության շրջանում, սկզբնապես աչքի էր ընկնում առավել ծայրահեղականությամբ և անհանդուրժողականությամբ: Սակայն

իր էվոլյուցիայի ընթացքում ենթարկվելով որոշակի փոփոխությունների՝ ինչ-որ առումով ռոմանտիկ ծայրահեղական այդ ազգայնականությունը կամ, այլ կերպ ասած, պանիրանիզմը, որպես գաղափարախոսություն և շարժում Իրանում վերջնականապես ձևավորվեց 20-րդ դարում: Այն բուռն զարգացում ապրեց հատկապես Սահմանադրական հեղափոխության սկզբում՝ ուսյալ երիտասարդների մի հոծ զանգվածի ծանոթացնելով եվրոպական դեմոկրատական արժեքներին:

Իրանի նորագույն պատմության մեջ պարսկական ազգայնականության առաջին գաղափարախոսը եղավ Ֆ. Ախունդզադեի գաղափարների և քաղաքական ուղղության հետևորդ Միրզա Աղա-խան Քերմանին, որն ավելի զարգացրեց իրանական ազգայնականության առաջին գաղափարախոսների, հատկապես Ախունդզադեի ազգայնականության կարևոր տարրերը, այն է՝ հնագույն Իրանի ոգեշունչ մեծարում, ընգծված հակաարաբականություն և հակաիսլամականություն, արագ եվրոպականացում: Նոր իրանական ազգայնականության մեջ տեղ գտավ նաև հակաթուրանականությունը, ինչը բացակայում էր Ախունդզադեի և նրա համախոհների հիմնադրույթներում, և ձևավորվեց միայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ վառ կերպով դրսևորվեց նրա հակաարաբական և հակաիսլամական կողմնորոշումը:

- Պանիրանիզմի էության խորազնին դիտարկումը ցույց է տալիս, որ այն նույնանում է հնամետության և պարսկական ազգայնականության հետ, ինչով էլ, թերևս, բացատրվում է վերջինիս յուրահատկությունը: Պանիրանիզմը, այսպիսով, առաջացել է երկու գաղափարախոսությունների՝ հնամետության և պարսկական ազգայնականության սինթեզի հետևանքով: Հնամետության հիմնադրույթներն ուղղված են Իրանի հասարակական, քաղաքական և մշակութային առաջընթացին՝ որպես հիմնաքար ծառայեցնելով ազգային մշակույթն ու պատմությունը, սեփական փորձն ու ավանդույթները: Այն կոչված է վերածնելու և վերահմաստավորելու Իրանի փառավոր անցյալը: Սահմանազատելով Իրանի պատմության երկու կարևորագույն՝ նախաիսլամական և իսլամական շրջանները և գերադասությունը անվերապահորեն տալով նախաիսլամական Իրանի ազգային իդեալին՝ այն ծայրաստիճան բացասական վերաբերմունք է դրսևորում նրա իսլամական շրջանի պատմությանը՝ համարելով այն երկրի հետընթացի և ներդաշնակության խաթարման պատճառ: Այս է վկայում նաև հնամետության մեջ արմատավորված այն մտայնությունը, որ ժողովրդին հնարավոր է վերադարձնել իր իրական արմատներին՝ միմիայն ջնջելով նրա կյանքից իսլամական մշակույթի թողած հետքերը:

- Պանիրանիզմը, ձգտելով իրանական բոլոր ցեղերի և ժողովրդների միասնականացմանը, այդ նպատակի իրականացման հիմնական հենակետեր է դիտում ընդհանուր լեզվական, ազգային-ծագումնաբանական, կրոնական և պատմաաշխարհագրական գործոնները: Միանգամայն պարզ է, սակայն, որ տարբեր ժամանակներում տարածքների կորստյան փաստը, Իրանի բնակիչների լեզվական միատարրության բացակայությունը,

պատմական զարգացման ընթացքում բազմաթիվ էթնիկական տեղաշարժերը, ներթափանցումները ու միաձուլումները մեծ չափով ազդել են իրանցիների էթնիկ պատկերի վրա, և, փաստորեն, վերը հիշված գործոնները անկարող են վստահելի հիմք ծառայել պանիրանիզմի համար:

-1905-1911 թթ. Սահմանադրական հեղափոխությունից հետո պանիրանիզմի կարևոր բաղադրիչներից մեկը՝ հնամետությունը, զարգանում էր հիմնականում հետևյալ երկու ուղղություններով՝ պարսկերենի զտում և մաքրում արաբական տարրերից և՝ նախաիսլամական՝ զրադաշտական Իրանի մշակութային արժեքների վերակենդանացում: Հատկապես այս վերջին տեսակետի կողմնակիցները գտնում էին, որ զրադաշտականությունը երբեք խոչընդոտ չի հանդիսացել Իրանի հասարակական-քաղաքական առաջընթացի ու մշակութային վերելքի համար, այլ, ընդհակառակը, նպաստել է դրան, և որ նախաիսլամական շրջանում Իրանի՝ տարածաշրջանի հզոր պետություններից մեկի ավանդույթները ոչնչացվեցին միայն արաբական արշավանքների և իսլամի ներթափանցման հետևանքով:

- 19-րդ-20-րդ դդ. Իրանի հասարակական-քաղաքական գործընթացների համատեքստում պանիրանիզմի գաղափարախոսության ձևավորումն ու զարգացումը, ինչպես նաև նրա հետևորդների կողմնորոշումների, նրանց գործունեության ուղղվածության և հետապնդած նպատակների մեջ կատարված փոփոխություններն անմիջապես պայմանավորված են պատմական այդ տևական շրջանի առանձին փուլերում Իրանում ստեղծված որոշակի ներքին և արտաքին քաղաքական իրադրությամբ, ինչպես նաև Իրանի համար առավել կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններով:

- Պանիրանիզմը երբեք իր առջև նպատակ չի դրել ոչնչացնել այլ ժողովրդների պատմությունը կամ մշակույթը: Թերևս կարելի պնդել, որ իր հիմնական դրսևորումներով այն անվերապահորեն ունեցել է կառուցողական նկրտումներ: Այս ազգայնականության միակ և անդրդվելի նպատակը սեփական մշակույթի, պատմության և հինավուրց ավանդույթների խոր ընկալման և արժևորման վրա հիմնված միասնական, անբաժանելի, համերաշխ և ազատ Իրանի կերտումն էր:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները

1. Սաղեղինիա Հ., Պանիրանիստական կուսակցության ձևավորումը և գործունեությունը Իրանում, Orientalia, N 3, Եր., 2006, էջ 8-15.
2. Սաղեղինիա Հ., Պանիրանիզմի առաջին գաղափարակիրներե Միրզա Ախունդզադե (Ախունդով), Orientalia , N 3, Եր., 2006, էջ 101-110.
3. Սաղեղինիա Հ., Հայերի դերը Իրանի Սահմանադրական հեղափոխության մեջ, Իրան - նամէ, N 40, Եր., 2005, էջ. 83-88. (պարսկերեն)

САДЕГИНИА ХАМДОЛЛА НЕМАТОЛЛАЕВИЧ

ПАНИРАНИЗМ В КОНТЕКСТЕ ОБШЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКИХ РАЗВИТИЙ ИРАНА 19-20 вв.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02. – “Всемирная История”.

Защита состоится 15 / 03 / 2007г. в 14:00 часов на заседании специализированного совета 006 по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24г., Институт востоковедения НАН РА.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению возникновения и развития идеологии панираизма в контексте общественно-политических процессов в Иране в 19-20 вв.

Всестороннее изучение вопросов, касаюшихся иранского национолизма и, в частонсти, панираизма, вызвано необходимостью по возможности полного исследования этой идеологии, выявления обстоятельств, обусловивших процесс ее формирования и развития, ее основных целей и уточнения ее оценки.

Исследование данной темы имеет черезвычайно важное значение и для изучения и понимания внутри-и внешнеполитических процессов Ирана в этот период.

Исключительной важностью данного этапа иранского националистического движения является то, что в силу различных обстоятельств именно в этот период были сформированы иранская националистическая идеология, в частости, идеология панираизма, ее основные принципы и аспекты, что обусловило определенную направленность деятельности ее последователей.

Тема диссертации не становилась предметом отдельного исследования, хотя ее различные аспекты освещались в армянской, иранской и зарубежной историографии. По содержанию и структуре данная работа является первым подобным исследованием.

Диссертация состоит из предисловия, трех глав (каждая из которых содержит разделы), заключения, списка использованных первоисточников и научной литературы.

В предисловии обосновывается актуальность и важность темы диссертации, формулируются ее цели и задачи, научная новизна, теоретическое и практическое значение. В предисловии также дается краткий обзор использованных источников и литературы, раскрываются методологические основы исследования.

В первой главе диссертации (“Общественно-политическая ситуация в Иране в 19 в. Первые идеологи панираизма”) рассматриваются внутренние и внешние предпосылки возникнивения в Иране идеологии панираизма, процесс ее развития и распространения.

Беспрецедентная активизация с начала 19 в. политики европейских держав, особенно Англии и России в Иране и превращение Ирана в полуколонию стали осбовными причинами усиления националистических настроений в стране и их различных проявлений.

Одновременно возможность тесного обшения с европейской цивилизацией и культурой сделало белее явным крайнюю отсталость Ирана и послужило стимулом для иранских националистов, используя опыт Европы, искать реальные пути выхода из кризиса.

В этой главе всесторонне рассматривается также деятельность первых идеологов панирализма.

Вторая глава ("Обшественно-политическое развитие Ирана в первой половине 20 в. (1896-1941 г.г.). Формирование нового панирализма") посвещяна детальному исследиванию одного из важнейших периодов обшественно-политического развития Ирана, анализу отдельных этапов его эволюции (1896-1906 г.г.), (1906-1921г.г.), (1921-1941г.г).

Сложившаяся в этот период определенная политическая ситуация в Иране, Конституционная революция 1905-1911г.г., установление в 1925 г. Пехлевийской династии, характер и направленность политики Реза шаха Пехлеви максимально способствовали национальному пробуждению иранцев, новому подъему национализма, осознанию необходимости объединения национальных сил, развитию и распространению идеологии панирализма.

В этой главе рассматриваются также процесс формирования в Иране политических партий разных направлений, мировоззрения и деятельность основоположников панирализма.

В третьей главе ("Обшественно-политические прецессы Ирана во второй половине 20-го в. (1941-1978 г.г.) Создание панирализтских партий") исследуется эволюция обшественно-политических процессов этого периода. Подробно рассматриваются сложившаяся обстановка в Иране в годы Второй мировой войны, определенная политика, проводимая СССР, Англией и США, уселение недовольства различных слоев иранской обшественности и движение национальных сил, направленное на восстановление экономической и политической самостоятельности страны.

Этому процессу в большей мере способствовали также национализация в 1951 г. иранской нефтянной промышленности и приход к власти провительства национальной буржуазии во главе с лидером Националного фронта М. Мосаддыком.

В главе рассматриваются также форморование "Панирализтской партии", "Национаь-социалистической рабочей партии Ирана" ("Сумка") и "Партии иранского народа", направленность и основные аспекты их деятельности, а также произошедшие в ней перемены в контексте процесса обшественного развития Ирана.

Существенные различия в принцыпах и деятельности этих партий во

многом предопределили позицию каждого из них в отношении Исламской революции 1978-1979 г.г.

В заключении диссертации представлены основные выводы по рассмотренным в работе проблемам.

Формирование идеологии панирализма и деятельность его представителей имели непосредственное и существенное влияние на весь дальнейший период национального движения в Иране, и во многом определили его направленность и последующее развитие.

HAMDOLLAH N. SADEGHINIA

PANIRANISM AND SOCIO-POLITICAL DEVELOPMENT IN IRAN IN THE LAST TWO CENTURIES (19th-20th)